նասենցն կերաք և անտի ի Մղսոնցն։ Թադէոսն[1]) օրս գնաց ի սիլա։

Եւ առաւօտուս Բշի (22 Դեկտ.) ձայնեաց Հոգեւորտէրն զժողովուրդս մեր եկեղեցոյն, որք յայլ եկեղեցիսն երթային և ոչ երթային ի Սուրբ Սարգիս վասն չարութեան արանցն այնոցիկ, զսոսա ձայնեաց Հոգևորտէրն մինչև արանց Լ-ից ընտրելագոյն իշխանաց, և եդ աթոռակալ զՀաճի Աբտուլան և եամախ զՂազարն և երէցփոխան զՍատէթ պալին և եամախ զՄուղսի Պօղոսն, և զայլս ի վերայ կարգեաց սոցա՝ մի հօտ և մի հովիւ լինելով ամենեցուն։ Եւ երեկոյիս գնացաք ի ժամ ի Սուրբ Սարգիս ամենայն ժողովրդովք և արարաք նախատօնակ Դաւթայ մարգարէին և Յակոբայ Տեառնեղբօրն։

Եւ առաւօտուս (23 Դեկտ.) արար պատարագ Տէր Թորոսն յԷտրէնու, զոր և զսա եդ կաթողիկոսն ժամարար եկեղեցոյն մեր, և զնոխուտի տղան հանեց։ Եւ օրս զհացն ի Մղսոնցն կերաք, Մայրամն ևս անդ էր Պալատցին։

Օրս մեծ տիւան արարեալ Տաճկացն և պատասխանի տվեալ դեսպանին Պարսից, զի ելեալ գնասցէ առ տէրն իւր։

Ուրբաթ (26 Դեկտ.). ճէպէճի և թօփչի և սպահիք և ոչ լեալ եէնկիչէրիք ընդ սոցա, այլ ասացեալ բանիւ թէ Եմք ընդ ձեզ. և նոքա լեալ մի ամբոխ և գնացեալ ի դուռ վէզիրին թէ Թագաւորն զպատերազմի թուղն թո՛ղ հանէ. և վէզիրն ասացեալ թէ Դո՞ւք էք վէքիլ թագաւորին որ զայդ ասէք. և սոքա ի լուռ լեալ. զսոսա արհամարհէ մեծաւ նախատանօք, և սոքա դառնան՝ թէ այլ մեծ ամբոխ կապեն և զինչ ևս կամին զայն արասցեն, որպէս յաւուրս Իփշիրին

1) Թաթէոսն.